ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2019 թվականի 3-րդ եռամսյակում A-282-19 ծածկագրով իրականացված «Երևան քաղաքի Գլխավոր պողոտայի տարածքում նոր ենթակայանի կառուցման նպատակով բարձր լարման ուժային սարքավորումների մատակարարման (լոտ 2)» առաջարկների բաց հարցման մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2020

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ -ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգի արդյունքները

Մոնիթորինգի իրականացման հիմքը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում №1) հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

Մոնիթորինգի օբյեկտը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն):

Մոնիթորինգի առարկան՝ Ընկերության կողմից 2019 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում իրականացված գնումների առանձին գործարքները:

Մոնիթորինգի նպատակը՝ Ընկերության կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրություն և համապատասխանության գնահատում Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №391Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում №2) սահմանված լրացուցիչ պահանջներին:

Մոնիթորինգի իրականացման ժամկետը՝ 2019 թվականի դեկտեմբերի 10-ից մինչև 2020 թվականի հունվարի 7-ը:

Մոնիթորինգի մեթոդաբանությունը՝ Ընկերության գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի միջոցով:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2019 թվականի 3-րդ եռամսյակում A-282-19 ծածկագրով իրականացված «Երևան քաղաքի Գլխավոր պողոտայի տարածքում նոր ենթակայանի կառուցման նպատակով բարձր լարման ուժային սարքավորումների մատակարարման (լոտ 2)» առաջարկների բաց հարցում

Ընկերության 2019 թվականի գնումների պլանի հիման վրա, տնօրենի 2019 թվականի հուլիսի 3-ի №92-Լ հրամանի համաձայն, Ընկերությունը կազմակերպել և անցկացրել է առաջարկների բաց հարցում 2 լոտով՝ գլխավոր պողոտայի տարածքում նոր կառուցվող ենթակայանի համար ուժային սարքավորումների մատակարարման պայմանագրի կնքման իրավունքով, հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանելով 2019 թվականի հուլիսի 16-ը, պայմանագրի կատարման ժամկետ՝ 2020 թվականի հունվարի 8-ից սկսած 60 աշխատանքային օրերի ընթացքում:

Հայտարարությունը Ընկերության կայքում և ֆինանսների նախարարության էլեկտրոնային տեղեկագրում հրապարակվել է 2019 թվականի հուլիսի 9-ին:

Նախքան մրցույթի հայտարարումը, ընկերությունը կատարել է շուկայի ուսումնասիրություն, ինչի վերաբերյալ փաստաթղթերը կցված են մրցութային փաթեթին:

Մրցույթի հայտարարումից հետո, հայտ են ներկայացրել երեք մասնակից, որոնցից մեկի՝ «Սիմենս» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած հայտը մրցութային հանձնաժողովի կողմից մերժվել է՝ որոշ թղթերի բացակայության պատճառով: Լոտ 2-ի համար գնային առաջարկ էին ներկայացրել երկու մասնակից՝ «Կասկադ Էներգո» ՍՊԸ-ն և «Նորտոքս Էնջինիրինգ» ՓԲԸ-ն: Ներկայացված հայտերը մրցութային հանձնաժողովի կողմից համարվել են մրցութային պայմաններին բավարարող: Համաձայն գնահատման չափանիշների՝ հայտերը դասակարգվել են հետևյալ կերպ.

	Ընկերության անվանում	Ներկայացված գնային առաջարկները մլն դրամ, առանց ԱԱՀ
1	2	3
1	«Կասկադ Էներգո» ՍՊԸ	44,8
2	«Նորտոքս Էնջինիրինգ» ՓԲԸ	48,5

Հաղթող է ճանաչվել «Կասկադ Էներգո» ՍՊԸ-ն, որի հետ 2019 թվականի դեկտեմբերի 24-ին կնքվել է պայմանագիր, գինը՝ 94 000 ԱՄՆ դոլար առանց ԱԱՀ: Հարկ է նշել, որ պայմանագիրը դադարեցվել է՝ մատակարարվող ապրանքի գնի շուրջ քննարկումների պատճառով:

A-282-19 ծածկագրով իրականացված «Երևան քաղաքի Գլխավոր պողոտայի տարածքում նոր ենթակայանի կառուցման նպատակով բարձր լարման ուժային սարքավորումների մատակարարման (լոտ 2)» առաջարկների բաց հարցման փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հարկ է փաստել, որ.

1. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն գնման ընթացակարգի փաստաթղթերը և գնման առարկայի տեխնիկական բնութագրերը կազմել է պատշաճ մակարդակով:
2. Նախքան մրցույթի հայտարարումը, ընկերությունը կատարել է շուկայի ուսումնասիրություն, ինչի վերաբերյալ փաստաթղթերը կցված են մրցութային փաթեթին:
3. Պայմանագրով սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ:
4. Հարկ է նշել, որ գնման պայմանագիրը դադարեցվել է:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

Ընկերության անվանումը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ

Գնման անվանումը «Երևան քաղաքի Գլխավոր պողոտայի տարածքում նոր ենթակայանի կառուցման նպատակով բարձր լարման ուժային սարքավորումների մատակարարման (լոտ 2)»

Գնման ծածկագիրը A-282-19

Գնման ձևը առաջարկների բաց հարցում

ԲՈԼՈՐ ՓՈՒԼԵՐԸ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
1	Համարժեք և համապատասխան գրառումները պահպանվում են գնումների գործընթացի ողջ ընթացքում և մոնիթորինգ իրականացնելու համար բավարար տեղեկատվություն են պարունակում	☑	☐	☐	

ԳՆՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
2	Գնման հայտը հաստատել է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը	☑	☐	☐	

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
3	Գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրությունը ճիշտ է կատարվել	☑	☐	☐	
4	Մինչև գնումների հրավերների հրապարակելը իրականացվել է համապատասխան շուկայի ուսումնասիրություն (փաստաթղթերը կցված են)	☑	☐	☐	Նախքան մրցույթի հայտարարումը, ընկերությունը կատարել է շուկայի ուսումնասիրություն, ինչի վերաբերյալ փաստաթղթերը կցված են մրցութային փաթեթին:
5	Գնման գործընթացի արդյունավետ իրականացման, ոչ մրցութային եղանակով գնումների ծավալի նվազեցման նպատակով՝ ընկերությունը իր վեբ կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկատուում հրապարակելուց բացի դիմե՞լ է արդյոք այլ միջոցների մասնակիցների շրջանակը ընդլայնելու և նրանց միջև մրցակցության խրախուսման համար	☑	☐	☐	Հայտարարությունը հրապարակվել է նաև «Գոլոս Արմենիի» և «Առավոտ» թերթերում:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
6	Ապահովվել են հավասար մրցակցային պայմաններ հնարավոր մասնակիցների համար	☑	☐	☐	
7	Գնման առարկայի բնութագիրը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը	☐	☑	☐	

8	Գնումը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է	☑	☐	☐
9	Մանրամասն ներկայացված են գնման ընթացակարգի փաստաթղթերը	☑	☐	☐
10	Պատշաճ ձևով ներկայացված են ապրանքների տեխնիկական բնութագրերը, իսկ աշխատանքների կամ ծառայությունների դեպքում՝ ամբողջական նկարագրությունը	☑	☐	☐
11	Ամբողջությամբ և հստակ նկարագրված են ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարմեկնաբանությունը	☑	☐	☐
12	Գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի, կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի	☐	☑	☐

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
13	Հայտերի գնահատման ընթացակարգը ընթացել է արդար և անկողմնակալ	☑	☐	☐	
14	Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին	☑	☐	☐	

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
15	**Հայտերի գնահատման ժամանակ ապահովվել է հատուցում արժեքի դիմաց սկզբունքը**	☑	☐	☐	Նախքան մրցույթի հայտարարումը, ընկերությունը կատարել է շուկայի ուսումնասիրություն, ինչի վերաբերյալ փաստաթղթերը կցված են մրցութային փաթեթին:
16	**Պայմանագրի գնի հաշվարկը ներառում է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը)**	☑	☐	☐	

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
17	**Սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ**	☑	☐	☐	
18	**Գնման պայմանագիրը կատարվել է պատշաճ մակարդակով**	☐	☐	☑	Պայմանագիրը դադարեցվել է:
19	**Գնման առարկայի արժեքը համապատասխան է շուկայական արժեքին**	☐	☐	☑	Մատակարարվող սարքավորումների գնագոյացման վերաբերյալ ընթանում են ուսումնասիրություններ և քննարկումներ: